



ՀՀ ԼՈՐՈՒ մարզի ՈւՐՈՒՄԻ միջնակարգ դպրոցի Մարթեմատիկայի և Ինֆորմատիկայի ուսուցչուհի Հեղինե Այվազյանի 2021-2022 ուսումնական տարվա հաշվետվությունը



Մարդկային մտածողությունը, ստեղծագործելու կարողությունը բնության շնորհներից ամենամեծն է: Երեխաների ինտելեկտուալ ներուժի առավել ամբողջական բացահայտումը ժամանակակից կրթության հրատապ խնդիրն է: Ուստի երեխաների հետ աշխատող ուսուցչի նպատակն է ստեղծել այնպիսի կրթական տարածք, որը կապահովի երեխաների կարողությունների զարգացումը և, հետևաբար, նրանց անհատական անհատական աճը:

| | | | | | | | | |
|---|-----|-----------------|----------|-------------------------|----|-----------------------|-----|----------|
| <p>Մաթեմատիկայի ուսուցումը մի ամբողջ ճանապարհորդություն է, այլ ոչ թե կարճ ուղի Մեթոյու Լարսոն</p>  | | Առարկան | Դասարանը | Շաբաթական ժամերի քանակը | | Տարեկան ժամերի քանակը | | |
| | | | | I | II | I | II | Ընդամենը |
| | 1 | Հանրահաշիվ | IX | 4 | 4 | 52 | 80 | 132 |
| | 2 | Երկրաչափություն | IX | 3 | 3 | 39 | 61 | 100 |
| | 3 | Հանրահաշիվ | XII | 5 | 6 | 65 | 121 | 186 |
| | 4 | Երկրաչափություն | XII | 3 | 4 | 39 | 82 | 121 |
| | 5 | Ինֆորմատիկա | VI | 1 | 1 | 13 | 21 | 34 |
| | 6 | | VII | 1 | 1 | 13 | 21 | 34 |
| | 7 | | VIII | 1 | 1 | 14 | 21 | 35 |
| | 8 | | IX | 1 | 1 | 13 | 21 | 34 |
| | 9 | | X | 1 | 1 | 13 | 21 | 34 |
| 10 | XI | | 1 | 1 | 13 | 21 | 34 | |
| 11 | XII | | 1 | 1 | 13 | 21 | 34 | |
| <p>Կրթությունը բանականության դեմքն է: Քեյ Բավուս</p> <p>Սարդկային միտքը սնվում է ուսուցմամբ և մտածելով: Ցիցերոն</p> | | Ընդհանուր | | 22 | 23 | | | |

| Ուսուցչի ազգանուն անուն | Դաս. | Առարկա | Աշակերտների թիվը | «1-3» միավոր (1-8 միավոր) | «4-6» միավոր (8-12 միավոր) | «7-9» միավոր (13-18 միավոր) | «10» միավոր (19-20 միավոր) | |
|-------------------------|------|-----------------|------------------|---------------------------|----------------------------|-----------------------------|----------------------------|---------|
| Այվազյան Հեղինե | XII | Հանրահաշիվ | 9 | 0 | 4 (44.4%) | 5 (55.6%) | 0 | Տարեկան |
| | | Երկրաչափություն | 9 | 0 | 2(22.2%) | 7 (77.7%) | 0 | Տարեկան |
| | | Մաթեմատիկա | 9 | 0 | 3 (33.3%) | 6(66.6%) | 0 | Քննական |
| | IX | Հանրահաշիվ | 7 | 0 | 3(43%) | 4(57%) | 0 | Տարեկան |
| | | Երկրաչափություն | 7 | 0 | 3(43%) | 4(57%) | 0 | Տարեկան |
| | | Մաթեմատիկա | 7 | 0 | 7(100%) | 0 | 0 | Քննական |
| | VI | Ինֆորմատիկա | 14 | 0 | 0 | 11(78.6%) | 3(21.4%) | Տարեկան |
| | VII | | 13 | 0 | 0 | 13(100%) | 0 | Տարեկան |
| | VIII | | 13 | 0 | 1(7.7%) | 12(92.3%) | 0 | Տարեկան |
| | IX | | 7 | 0 | 0 | 7(100%) | 0 | Տարեկան |
| | X | | 9 | 0 | 0 | 9(100%) | 0 | Տարեկան |
| | XI | | 10 | 0 | 1(10%) | 9(90%) | 0 | Տարեկան |
| | XII | | 9 | 0 | 3(33.3%) | 6(66.6%) | 0 | Տարեկան |

VII. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

1. Պաշտոնային պարտականությունները՝

- 1) պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան.
- 2) ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ.
- 3) բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները.
- 4) նպաստում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում հայրենասիրություն, ձևավորում պատշաճ վարքագիծ և վարվելակերպ.
- 5) սովորողների մեջ զարգացնում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները.
- 6) նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը.
- 7) հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.
- 8) հետևողականորեն կատարելագործում է իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնում ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ.
- 9) համագործակցում է սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում.
- 10) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.
- 11) մասնակցում է հաստատության մեթոդավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին.
- 12) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

1) պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան.

Պլանավորում

| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
|--|--|--|
| Կազմել եմ իմ առարկայի թեմատիկ պլանը բոլոր դասարանների համար: | V-XII դասարանների առարկայական թեմատիկ պլանավորումը կատարել եմ՝ հիմք ընդունելով հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները: (Հավելված N1 ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2011թ. 29 օգոստոսի- N1000-Ա/Ք հրամանի) | |
| Գրել եմ բոլոր դասերի պլանները և դրանք պահպանել եմ: Հաշվի եմ առել չափորոշչային պահանջները: | Պլանում նշել եմ դասի ակադեմիական և սոցիալական նպատակները, նկարագրել եմ դասի ընթացքը՝ ԽԻԿ, գնահատում, տնային հանձնարարություն: | |
| Կազմել եմ բոլոր թեմատիկ գրավոր աշխատանքների տեքստերը: | Կազմել եմ թեստային աշխատանքներ՝ հիմք ընդունելով հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները: Գրավորների անցկացման համար որպես ուսումնական ձեռնարկներ օգտագործել | |

| | | |
|--|--|--|
| | Եմ շտեմարանները և մաթեմատիկայի գրավոր աշխատանքների համար նախատեսված լրացուցիչ ուսումնական գրականությունը: | |
| Մշակել եմ բանավոր և գրավոր գնահատման սկզբունքները: | Գնահատման գործընթացն իրականացրել եմ 2021-2022 ուսումնական տարում ՀՀ հանրակրթության դպրոցներում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ մեթոդական ցուցումների հիման վրա՝ մանկավարժական խորհրդի որոշմամբ: | |
| Մշակել եմ բաց դասի պլան: | Օգտվել եմ S2S գործիքներից և ինտերակտիվ գրատախտակներից: | |
| Մշակել եմ առարկայական միջոցառումներ: | Կազմակերպել եմ միջոցառումներ՝ հաշվի առնելով ուսումնական նյութի դաստիարակչական նշանակությունը, ուսումնական նյութի նկատմամբ աշակերտների ցուցաբերած հետաքրքրությունը: | |
| Մշակել եմ մեթոդական զեկուլցում/ սեմինար մեթոդավորման ուսուցիչների համար: | Այո: Օրինակ՝ նախագծային ուսուցման մասին, S2S գործիքների կիրառումը և այլն: | |
| Իրականացնում | | |
| սովորողներին ներկայացրել եմ գնահատման սկզբունքները: | Ներկայացրել եմ ՀՀ ԿԳՄՄՆ ԿԶՆԱԿ-ի կողմից երաշխավորված ձևավորող (ուսուցանող) և միավորային գնահատման համակարգին: 9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայի կենտրոնացված քննության կարգին, գնահատման մեթոդին և սանդղակին: Կից ներկայացնում եմ օգտագործված հղումները: 1. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html 2. https://www.youtube.com/watch?v=ehtqZU4Zvg0 | |
| Դասերը կազմակերպել եմ ըստ պլանի: | Պլանում նշել եմ դասի ակադեմիական և սոցիալական նպատակները, նկարագրել եմ դասի ընթացքը՝ ԽԻԿ, գնահատում, տնային հանձնարարություն: | |
| Իմ կողմից սովորողների բանավոր պատասխանների համար նշանակված գնահատականները հիմնականում համընկել են գրավոր աշխատանքների և քննությունների գնահատականներին: | Բանավոր հարցման արդյունքում աշակերտները ստացել են ավելի բարձր գնահատականներ: Ի տարբերություն բանավոր խոսք կառուցելու կարողություններին՝ IX դասարանի աշակերտների մոտ գրավոր աշխատանք կառուցելու հմտություններն ու կարողություններն ավելի թույլ են զարգացած: | |
| Իրականացրել եմ առարկայական միջոցառումներ իմ դասարաններում: | Կազմակերպել եմ միջոցառումներ՝ հաշվի առնելով ուսումնական նյութի դաստիարակչական նշանակությունը, ուսումնական նյութի նկատմամբ աշակերտների ցուցաբերած հետաքրքրությունը: | |
| Իրականացրել եմ մեթոդական զեկուլցում/սեմինար և մեթոդավորման ուսուցիչների համար: | Մեթոդական զեկուլցումներ ներկայացրել եմ մեթոդավորման նիստերում: Նպատակը եղել է մանկավարժական փորձի ընդհանրացումն ու ներդրումը: | |
| Բոլոր դասալսումներից հետո մասնակցել եմ դասի քննարկմանը և կատարել եմ անհրաժեշտ հետևություններ: | Դասալսումներ են կատարել դպրոցի տնօրենը, տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալը, այլ ուսուցիչներ: | |

2) ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը

սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ.

Պլանավորում

| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
|--|--|--|
| Ծրագրի պահանջների կատարումը ստուգել է առարկայական մեթոդափոխման նախագահը և/կամ տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալը և դիտողություններ չեմ ստացել: | Բոլոր դասարաններում ապահովել եմ ծրագրերի կատարողականը: | |
| Տարեկան դրական գնահատականներ ստացած սովորողները ունեն չափորոշիչն համապատասխան գիտելիք, որը հաստատվել է կիսամյակային ամփոփիչ աշխատանքների արդյունքներով: | Տարեկան դրական գնահատված աշակերտները դրական գնահատականներ են ստացել 1-ին կիսամյակի կիսամյակային ամփոփիչ աշխատանքներից, ինչպես նաև «Մաթեմատիկա» առարկայի պետական ավարտական և կենտրոնացված ավարտական քննություններից: | |
| Դասավանդման ժամանակ կիրառել եմ ՏՀՏ: | Ինֆորմատիկայի բոլոր դասերն անցկացրել եմ համակարգչային դասասենյակում՝ կիրառելով ՏՀՏ: Մաթեմատիկայի / Հանրահաշիվ, Երկրաչափություն/ առարկայական դասերն առնվազն ամիսը մեկ անգամ անցկացրել եմ համակարգչային դասասենյակում՝ կիրառելով ՏՀՏ: | |
| Դասավանդման ժամանակ կիրառել եմ հետևյալ մեթոդները: | Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառել եմ ուսուցման ավանդական մեթոդները՝ պատմելը, բացատրելը, ապացուցելը, դասախոսությունը, աքսիոմատիկ մեթոդներ... Աշակերտների մտածողության զարգացման, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների, ունակությունների ձևավորման համար կիրառել եմ նոր մեթոդներ՝ խճանկար, շրջագայություն պատկերասրահում, խմբավորում, Վենի դիագրամ, Ջիգսո, մտագրոհ, դերային խաղ, գաղափարների քարտեզագրում, T-աձև աղյուսակ, ԳՈԲՍ, քառաբաժան, գնահատման անիվ, շրջված դասարան, խառը ուսուցում, պրիզմա, նախագծային մեթոդ, | |

3) բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների ուսումնասության ընթացքում նկատված կրթական կարիքները.

Պլանավորում

| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
|--|---|--|
| Դասավանդման ընթացքում սովորողների մոտ նկատել եմ հետևյալ կրթական կարիքները: | Մաթեմատիկայի, ինչպես նաև ցանկացած ուսումնական այլ առարկայի ուսուցման նպատակները մշտապես ենթակա են որոշակի փոփոխությունների՝ կախված այն խնդիրներից, որոնք անընդհատ դրվում են հանրակրթական դպրոցի առաջ պետության և հասարակության կողմից: | |
| Նշված թերությունները լուծել եմ հետևյալ եղանակով: | Մաթեմատիկական հասկացություններով աշխատելու, խնդիրներ և վարժություններ լուծելու միջոցով խթանել սովորողի մտավոր ունակությունների զարգացումը, բարձրակարգ մտածողության ձևավորումը, սովորեցնել հստակ ձևակերպել մտքերը, կատարել գրագետ դատողություններ և արագ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում: | |

| | | |
|--|---|--|
| | <p>Կարողանալ սերմանել և զարգացնել սովորողների հետաքրքրությունները մաթեմատիկայի նկատմամբ, խթանել նրանց ճանաչողական ակտիվությունը և այլն:</p> <p>Մաթեմատիկայի ուսուցման մյուս առանձնահատկությունն այն է, որ մաթեմատիկան ուսուցանվում է ոչ թե որպես փաստերի շարան (ինչպես դա աշխարհագրությունում կամ պատմության մեջ է), այլ որոշակի խնդիրների համակարգի միջոցով:</p> | |
|--|---|--|

| | | |
|---|---|--|
| 4) նպաստում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում հայրենասիրություն, ձևավորում պատշաճ վարքագիծ և վարվելակերպ. | | |
| Պլանավորում | | |
| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
| Իմ առարկայի դավանդման ընթացքում նպաստել եմ արժեքային համակարգի ձևավորմանը հետևյալ մեթոդներով. | <p>Դասերը անց եմ կացրել առարկայական կարիներտներում:</p> <p>Մաթեմատիկան դարձրել եմ դասավանդվող մյուս գիտություններից տարբերվում է նաև իր մտածելակերպով, մտածելու ոճով: Մաթեմատիկայի միջոցով իրականացվող կրթական գործընթացն այսօր ոչ միայն մաթեմատիկայի ուսուցումն է: Այն ոչ միայն մաթեմատիկական գիտելիքների, կարողությունների և հմտությունների, այլև արժեքահամակարգի ձևավորման գործընթաց է: Եվ մաթեմատիկան այս տեսակետից ունի կրթական մեծ ներուժ և ի գործ է իր վճռական խոսքն ասել սպազա քաղաքացու արժեքային ողջ համակարգի ձևավորման գործում, որոնք ներկայացրել եմ հետևյալ կերպ.</p> <ol style="list-style-type: none"> 1. ստեղծագործություն և ինքնաարտահայտում, 2. վերլուծական և քննադատական մտածելակերպի հմտություններ, 3. գնահատման (բարոյական և գեղագիտական) կարողություններ, 4. հասարակական (համագործակցային) կարողություններ, 5. հաղորդակցական կարողություններ, 6. մաթեմատիկական կարողություններ, 7. սովորելու կարողություններ և գործնական կիրառություններ | |
| Իմ առարկայի դասավանդման ընթացքում նպաստել եմ հայրենասիրության դաստիարակմանը հետևյալ մեթոդներով. | <p>Մաթեմատիկայի դասերին աշակերտն ամբողջ ժամանակը չէ, որ կենտրոնանում է մաթեմատիկայի վերացական բնույթի վրա. համարյա յուրաքանչյուր դասի ընթացքում մաթեմատիկայի վերացական սխեմաները հանդերձավորվում, լրացվում և ցուցադրվում են ամենատարբեր փաստացի բովանդակությամբ՝ «տեքստային» խնդիրների բովանդակությունը, այդ թվում՝ «տեքստային» խնդիրների բովանդակած նյութ, պատմական տեղեկություններ, տարաբնույթ կիրառություններ և այլն: Ընդ որում փաստացի լրացման ընտրությունը շատ դեպքերում կարող է փոփոխվել շատ լայն շրջանակներում, և այդպիսով, հիմնականում, թողնված է դասավանդողի հայեցողությանը: Ակնհայտ է, որ այդպիսի հնարավորությունը ուսուցչի կողմից կարող է լայնորեն կիրառվել սովորողների ուշադրությունը հայրենիքի նկատմամբ սերն ու հարգանքը պահպանող և ամրապնդող փաստերի և թվերի վրա սնեռելուն: Մեզանում մի անգամ չէ, որ գրվել է հայրենասիրական բովանդակությամբ «տեքստային» խնդիրների ընտրության մասին: Այս հնարքի դեմ ոչ մի առարկություն չկա. միայն պետք է շատ խնամքով որոշել ընտրվող նյութը, որպեսզի խուսափենք բուն հայրենասիրության գաղափարի</p> | |

| | | |
|--|--|--|
| | <p>Էժանացումից, գոեհկացումից, ինչպես պատահում է, երբ խնդրի փաստացի բովանդակությունը բնական չէ, «մազերից քաշված է», կամ երբ բավականին հետաքրքիր թվեր և փաստեր հաղորդելով՝ խնդիրն այնպիսի հարց է առաջադրում, որն ակնհայտորեն ո՛չ անմիջական հետաքրքրություն է ունենում, ո՛չ էլ մի կիրառական նշանակություն: Իհարկե, այսուհանդերձ պետք է հստակորեն պատկերացնել, որ այս հնարքը միայն արտաքին է, հայրենասիրական զգացմունքների զարգացման համար այստեղ օգտագործվում են մաթեմատիկայի դասերը, ոչ թե բուն մաթեմատիկան:</p> <p>Այսօրվա աշակերտը պետք է ամենօրյա դաս-դասախոսությունների, էքսկուրսիաների միջոցով ծանոթանա մեր ազգային արժեքներին, իսկ մաթեմատիկան հզոր զենք է այն իրականացնելու համար: Այս առումով, մաթեմատիկայի ուսուցումը ևս լայն հնարավորություններ է ընձեռում սովորողի հայրենասիրական մղումները զարգացնելու առումով. ազգային մտածողությամբ շարադրված դասերը, դասագրքերի պատկերազարդումները հայկական ճարտարապետական կոթողների, խաչքարերի և այլ ազգային արժեքների նկարներով, խնդիրներում և առաջադրանքներում առկա հայկական տեղանունները, դրամական միավորները, հայ բարերարներին, հայտնիներին, մեծն հայրենասերներին նկարագրող դեպքերն ու իրավիճակները, այս ամենը կարելի է չափավոր օգտագործել և կաթիլ առ կաթիլ ներարկել սովորողի ուսուցման գործընթացում:</p> <p>Շատ հաճախ չեմ էլ նկատում, թե ինչպես եմ ոգևորվում որևէ խնդրի լուծման գեղեցիկ ընթացքից, և հաղթանակի, պայքարելու ու չհանձնվելու կոչեր անում՝ ասելով, որ յուրաքանչյուր խնդրի լուծում մի հաղթանակ է, և որ հայ ազգը միշտ պետք է հաղթող լինի:</p> | |
| <p>Իմ առարկայի դավանդման ընթացքում նպաստել եմ պատշաճ վարքագիծի և վարվելակերպի ձևավորմանը հետևյալ մեթոդներով.</p> | <p>Հայրենասիրական դաստիարակության խնդիրները արդիական են ժամանակակից հասարակության համար: Հասարակությունը գիտակցում է, որ մատաղ սերնդի համար կյանքի հստակ դրական ուղեցույցների բացակայությունը, հայրենասիրական դաստիարակության համակարգի բացակայությունը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել պետության մեջ: Այդ պատճառով դասավանդման ընթացքում սերմանում եմ աշակերտների մեջ, որ մաթեմատիկան սովորեցնում է կարճ, հակիրճ, սեղմ և կարևոր գաղափարներ արտահայտել, խնայելով ժամանակն ու դարձնում է սովորողի միտքը էլ ավելի ճկուն: Դրանով իսկ նպաստելով ավելորդ ինֆորմացիայի չեզոքացմանը՝ կարճ, հակիրճ և դիպուկ: Նպաստում է նաև առողջ դատողությանը, խմբային և անհատական սուր և հստակ մտքի դրսևորմանը: Նույնիսկ, եթե քննարկումը բազմակողմանի և ճյուղավորված բնույթ է կրում:</p> <p>Մաթեմատիկան այս տեսակետից ունի կրթական մեծ ներուժ և ի գործու է իր վճռական խոսքն ասել սպազա քաղաքացու արժեքային ողջ համակարգի ձևավորման գործում, որոնք ներկայացրել եմ հետևյալ կերպ.</p> <ol style="list-style-type: none"> 1. լեզվատրամաբանական մտածողության ձևավորում և սովորողների մաթեմատիկական կուլտուրայի դաստիարակում, 2. սովորողների մոտ մաթեմատիկական կայուն հետաքրքրությունների դաստիարակում, 3. սովորողների բարոյական, գեղագիտական և այլ արժեքների դաստիարակում (արժեքային համակարգի ձևավորում): | |

5) սովորողների մեջ զարգացնում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի

| անհատական կարողությունները. | | |
|---|--|-------------------------------------|
| Պլանավորում | | |
| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
| Իմ առարկայի դասավանդման ընթացքում զարգացրել եմ ինքնուրույնություն հետևյալ մեթոդներով. | Հանձնարարել եմ պատրաստել դիդակտիկ նյութեր, մոդելներ, գրել ռեֆերատներ, կատարել գործնական աշխատանքներ, խմբային քննարկումներ, որոնք նպաստել են ստեղծագործական և վերլուծական զարգացմանը: Ինչպե՞ս հայտնի մաթեմատիկոս Վ. Ուսպենսկին է ասում, որ «... ներկայումս առավել ևս պարզ է դառնում, որ մաթեմատիկան ոչ միայն թեորեմների տեսքով ներկայացված փաստերի հավաքածու է, այլ առաջին հերթին՝ մեթոդների զինանոց և նույնիսկ ամենից առաջ՝ գիտության և պրակտիկ գործունեության ամենատարբեր բնագավառների փաստերի նկարագրման համար անհրաժեշտ լեզու»: | |
| Իմ առարկայի դասավանդման ընթացքում զարգացրել եմ նախաձեռնություն հետևյալ մեթոդներով. | | |
| Իմ առարկայի դավանդման ընթացքում զարգացրել եմ ստեղծագործական ունակություններ հետևյալ մեթոդներով. | | |

| 6) նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը. | | |
|---|--|-------------------------------------|
| Պլանավորում | | |
| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
| Իմ առարկայի դասավանդման ընթացքում նպաստել եմ սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը հետևյալ մեթոդներով. | Տորմալ և ոչ ֆորմալ կրթական մեթոդներով, խաղերով ներկայացրել եմ ինքնակառավարման տարրերի ձևավորման գործընթացին: Կազմա հիմնադրամի կողմից իրականացրել եմ դասընթաց 9-րդ դասարանի սովորողների հետ: Ապահովել եմ միջառարկայական կապ: | |

| 7) հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը. | | |
|---|--|-------------------------------------|
| Պլանավորում | | |
| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
| Հարգել եմ և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը առաջնորդվելով հետևյալ օրենքներով և փաստաթղթերով. | Առաջնորդվել եմ հետևյալ օրենքներով և փաստաթղթերով՝ ՀՀ Սահմանադրություն, ՀՀ օրենքը հանրակրթության մասին, ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, դպրոցի օրինակելի կանոնադրություն, դպրոցի ներքին կարգապահական կանոններ... | |

8) հետևողականորեն կատարելագործում է իր առարկայական և մասնագիտական Գիտելիքներն ու հմտությունները, իրականացնում ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ.

| Պլանավորում | | |
|---|---|--|
| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
| Մասնակցել եմ հետևյալ վերապատրաստումներին: | Այս ուսումնական տարվա ընթացքում մասնակցել եմ բազմաթիվ դասընթացների, որոնցից կնշեմ միայն մի քանի կազմակերպություններ: ԿՏԱԿ, Կազա, Կոստա, Կրթության զարգացման և կառավարման հիմնադրամ, Կոնրեադ Ադենաուեր, ԱԺԻ և այլն: | |
| Ինքնուրույն ուսումնասիրել եմ հետևյալ մանկավարժական և մեթոդական գրականությունը: | Պարբերաբար ուսումնասիրել եմ մեթոդական և մանկավարժական գրականություն, ամսագրեր, օրինակ՝ Բնագետ, Մաթեմատիկան դպրոցում ամսագրերը: Տպագրված, տեղական և արտասահմանյան կրթական կայքէջերում տեղադրված նյութերը, որոնք վերաբերվում են ոչ միայն Մաթեմատիկային, Ինֆորմատիկային այլև ընդհանուր մանկավարժությանն ու ժամանակակից գիտության զարգացմանը: | |
| Ուսումնական տարվա ընթացքում իրականացրել եմ հետևյալ ստեղծագործական աշխատանքները: | Կազմել եմ SՏՏ ուսումնաօժանդակ նյութեր, թեստեր, առարկայական թեմատիկ պլաններ, հետազոտական աշխատանքներ, որոնք տեղակայվել են կրթական և սոցիալական կայքերում: | |
| Ուսումնական տարվա ընթացքում իրականացրել եմ հետևյալ հետազոտական աշխատանքները: | «Նախագծային ուսուցումը դպրոցում»: ԿԱԶԱ հիմնադրամի հետ համատեղ Բրավազիտակից քաղաքացի և այլն | |

9) համագործակցում է սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում.

| Պլանավորում | | |
|--|--|--|
| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
| Աշխատանքի ընթացքում կազմակերպել եմ անհատական հանդիպումներ և խորհրդատվություն հետևյալ սովորողների ծնողների հետ: | Պարբերաբար հանդիպել եմ ծնողների հետ: Կազմակերպել եմ համատեղ հանդիպումներ, քննարկումներ, միջոցառումներ: Կատարել անհատական խորհրդատվություններ էլեկտրոնային օրագրերի, «Արմաթ» խմբակ հաճախելու, հեռախոսի օգտակարության և վնասակարության մասին, ավարտական և պետական ավարտական քննությունների անցկացման վերաբերյալ: | |
| Մասնակցել եմ հետևյալ ծնողական ժողովներին: | Մասնակցել եմ ամփոփիչ ծնողական ժողովներին, տեղեկատվություն եմ հաղորդել աշակերտների վարքի և առաջադիմության մասին: | |
| Ծնողների առաջ բարձրացրել եմ հարցեր հետևյալ թեմաների շուրջ: | Ներկայացրել եմ բազմաթիվ թեմաներ, որոնցից կառանձնացնեմ «Ընտանիքի դերը երեխայի դաստիարակության գործում», «Կրթության դերն ու նշանակությունը», «Խելացի սարքերը մեր կյանքում», «Սոցիալական մեդիայի գործիքների կիրառում առօրյա կյանքում»: | |

10) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
|---|--|-------------------------------------|
| Կատարել եմ դասալսառումներ հետևյալ գործընկերների մոտ հետևյալ թեմաներով: | Կատարել եմ դասալսառումներ, սակայն քիչ, պայմանավորված Կորոնավիրոսի սահմանափակումներով : | |
| Ինձ մոտ գործընկերներս կատարել են հետևյալ թվով դասալսառումներ հետևյալ թեմաներով: | Դասալսառումներ են կատարել դպրոցի տնօրենը, տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալը, մեթոդափակորման անդամ ուսուցիչներ: | |
| Դասալսառումների հետևանքով իմ աշխատանքում կատարվել են հետևյալ փոփոխությունները: | ՏՀՏ գործքիների կիրառմամբ դասերի ժամանակ ավելի շատ եմ անդրադարձ կատարել միջառարկայական թեմաներին: | |

| 11) մասնակցում է հաստատության մեթոդափակորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին. | | |
|---|--|-------------------------------------|
| Պլանավորում | | |
| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
| Մասնակցել եմ բոլոր նիստերին: | Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել է 12 հերթական նիստ, որոնց մասնակցել եմ: | |
| Մեթոդափակորման աշխատանքների ընթացքում բացի մասնակցությունից ունեցել եմ հետևյալ ներդրումը: | Հանդես եմ եկել զեկուցումներով, ներկայացրել եմ իմ կողմից կազմված առարկայական թեմատիկ պլանները, կազմակերպել եմ համացանցի կրթական կայքէջերի, մասնագիտական ամսագրերի և թերթերի նյութերի քննարկում: | |

| 12) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները: | | |
|--|---|-------------------------------------|
| Պլանավորում | | |
| Աշխատանք | Նկարագրեք եթե կատարել եք: | Պատճառաբանեք, թե ինչու չեք կատարել: |
| Աշխատանքի ընթացքում պահպանել եմ ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները և չեմ ստացել որևէ դիտողություն և նկատողություն: | 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում որևէ դիտողություն կամ նկատողություն չեմ ստացել: | |

Հեղինե Այվազյան _____